ՀԷՂ ԵՂԱԾ Ի ԿԷՍԱՐԻՈՒԱԾ մասերը կորուած են)։ Մնայր Ուսկիւտարուն և Քաղկեդոնին և Պէկղօզին[1]) և այլոցն որ անդ՝ այս յաւելեալ ոչ երևելով մի չահ եկեղեցոյն, յորմէ հետէ այրեալ, զոր նոքա կալան, այլ պարաք. եւ զայս եւս բարձան ի վերայ ժողովրդոցն, զոր եւ նոքա ետուն։ Եւ խորհուրդ առեալ ի մէջ ժողովրդոցն և ասեն թէ Տանք և յետոյ (Ռեբէ)։

ԺԳ–իս[2]) Մարտի Շաբաթ ըմբռնեալ կիւմուշաբայճուն զՔէմխաճի կոչեցեալ երէցն[3]) ի գործն, և տարեալ առաջի փաշային և հարց և փորձ արարեալ՝ գտին և զընկերս նորա տաճիկս Ը, և հրամայէ տանել զամենեսեան ընդ երիցուն ի բանտս մահապարտացն զի սպանցէ ի գիշերին. և երէցն այն քանզի ի բնէ չարն էր և տէր պիտակ գործոյն, և ի ժամանակի զխաչս եկեղեցոյն գողացեալ և այլ ազգի ազգի չարութիւնս արարեալ և ի նաւս քարակրացն մտեալ և ազատեալ, զոր բազում անգամ խայտառակեալ ի գործոյն և ոչ լեալ լուռ ի բարիսն, այլ ընդ սատանայի և ըստ խրատուց նորա վարիւր, որ և այսօր զկատարեալ գործ նորին խրատու արար և ուրանալով[4]) զՔրիստոս առաջի բռնաւորին, որոյ լիցի Քրիստոս խայտառակիչ՝ զչարն զայն չարեօք կորուսանելով ի խրատ ստահակաց և ի մխիթարութիւն հաւատացելոց Քրիստոսի. ամէն։ Եւ զԸ ընկերս ուրացողին պղծոյ՝ ելեալ փաշան ի զօր և կախեալ ի Պարմաղափուն Բ, և ի Նշանճի անուանեալ սահմանսն Բ սպանեալ, ի Մէյտանճըք և ի Այասօֆին և ի Ղարամանն և այլ սահմանս քաղաքիս՝ խայտառակ մահուամբ սպանեալ զնոսա։

Շաբաթ երեկոյիս ի կիրակամուտ գնացաք Մարտիրոսի կնկանն որ եկեալ էր յԷտրէնու։

1) Պէղօզին. 2) ԺԴ–իս. 3) էրիցն. 4) ուրանով.